

Գրանցվել է՝ 01.09.2013թ.
Կար՝ 10093077

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՐԱԾՔԱԹՎ ԿԱՌԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

28. 12. 2012թ., N 09-Է
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

25. դեկտեմբեր 2012թ., N 22 - Ն
ք. Երևան

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾՆՆԹԱՅՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1913-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված ռազմավարական ծրագրի 2012-2016 թվականների միջոցառումների ցանկի 3-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացում տարբեր մակարդակների առողջապահական կազմակերպությունների և շահագրգիռ մարմինների դերերը հստակեցնելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Ն Ք

Հաստատել՝ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացում տարբեր մակարդակների առողջապահական կազմակերպությունների և շահագրգիռ մարմինների դերերը՝ համաձայն հավելվածի:



Հավելված


Հաստատված է

« տարածքային կառավարման նախարարի

2012 թ. թիվ.....

« առողջապահության նախարարի

25 դեկտեմբերի 2012 թ. թիվ 22-Ն



ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՍ
ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿԱՌԱՐԴՈՒՄ ԱՊԱՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԵՐԸ

I. Ազգային մակարդակ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը՝

1) Ստանում է տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության մարզերի սոցիալ-տնտեսական վիճակի, այդ թվում՝ վարակիչ հիվանդությունների իրավիճակի, դրանց առաջացման և տարածման պատճառների և պայմանների, կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացի մասին:

2) Քննության է առնում Հայաստանի Հանրապետության մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը, որոնք կարող են ներառել վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի միջոցառումներ:

3) Մշակում է Հայաստանի Հանրապետության մարզային և համայնքային նպատակային ծրագրեր, որոնք կարող են ներառել վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը և դրանց դեմ պայքարին վերաբերող հարցեր:

4) Քննարկում է վարակիչ հիվանդություններին առնչվող Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ քաղաքացիների նամակները (դիմումները և բողոքները):

- 5) Հաստատում է մարզպետների կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա ծրագրերը, որոնք կարող են ներառել նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի հարցեր:
- 6) Տալիս է համաձայնություն մարզպետների կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա ծրագրերում չներառված միջոցառումներին, որոնք կարող են առնչվել նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի հարցերին:
- 7) Իրականացում է իրավական հսկողություն համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված, ինչպես նաև՝ համայնքի ավագանու՝ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի հարցերի վերաբերյալ լիազորությունների իրականացման նկատմամբ:
- 8) Վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի հարցերով տեղական ինքնակառավարման մարմինների պահանջով, սահմանված կարգով, տալիս է սեփական և պատվիրակված լիազորությունների հետ կապված պաշտոնական պարզաբանումներ և խորհրդատվություններ:
- 9) Իրականացնում է իրավական հսկողություն վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի հարցերով մարզպետների ընդունած որոշումների նկատմամբ:
- 10) Ամփոփում է վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի հարցերով՝ մարզպետների գործունեության արդյունքների գնահատման Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության իրավասությանը վերապահված չափորոշիչների գնահատականները:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը

- 1) Իրականացնում է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների քաղաքականության, հայեցակարգերի, ռազմավարության մշակումն ու դրանց իրականացման նկատմամբ դիտարկումը:
- 2) Համակարգում է վարակիչ հիվանդությունների կանխարգելման և բուժման, հաշմանդամության և մահացության նվազեցմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացման դիտարկումը:

3) Մշակում է վարակիչ հիվանդությունների առնչությամբ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված պետական քաղաքականությունը և նպատակային ծրագրերը, մասնակցում դրանց իրականացմանը, ինչպես նաև՝ դիտարկում է դրանց կատարման ընթացքը:

4) Մշակում է վարակիչ հիվանդությունների հարցերով բնակչության հանրային իրազեկության և առողջապահական կրթության ծրագրերը և դիտարկում է դրանց իրականացումը:

5) Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերը ներառում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան և հեռանկարային ծրագրերի առողջապահական բաղադրիչում:

6) Ներառում է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերը լիցենզավորման և որակավորման համար պարտադիր պահանջներ և պայմաններ մշակելիս և դրանց պահպանման նկատմամբ դիտարկումներ իրականացնելիս, առողջապահության համակարգի հիմնարկների և կազմակերպությունների (ընկերությունների) գործունեության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս:

7) Ներառում է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումները պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պետական պատվեր ձևավորելիս և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրա իրականացումը դիտարկելիս:

8) Պետական պատվերի շրջանակներում իրականացվող դեղերի, բժշկական նշանակության ապրանքների և ծառայությունների կենտրոնացված գնումներ իրականացնելիս, գնումների դիմաց ֆինանսական միջոցներ հատկացնելիս ներառում է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման համար օգտագործվող դեղերը, բժշկական նշանակության ապրանքները և ծառայությունները:

9) Իրականացնում է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման ոլորտում ընդգրկված բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական բժշկական կադրերի պատրաստման (պատրաստում, մասնագիտացում, վերամասնագիտացում), կատարելագործման, շարունակական մասնագիտական զարգացման, առկա կադրային ներուժի պահպանման, զարգացման

և վերարտադրման, կադրերի արդյունավետ վերադասավորման ոլորտներում պետական քաղաքականության ծրագրերի մշակումն ու դրանց դիտարկումը:

10) Մշակում է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին և կանխարգելմանն ուղղված օրենքներ ու այլ իրավական ակտերի նախագծեր, Հայաստանի Հանրապետության նախարարությունների, քննարկում է հանրապետական գործադիր իշխանության և տարածքային կառավարման մարմինների կողմից մշակվող, վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին և կանխարգելմանն ուղղորտին առնչվող իրավական ակտերի նախագծերը ու ներկայացնում համապատասխան եզրակացություններ:

11) Իրականացնում է վարակիչ հիվանդություններին առնչվող՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթիկներ, տեղեկանքներ և այլն) ներդրումը և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, վարչական վիճակագրական ռեգիստրների վարումը:

12) Իրականացնում է վարակիչ հիվանդություններին առնչվող առողջապահական համակարգի և բնակչության առողջության վիճակի մասին տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունն ու գնահատումը:

II. Մարզային մակարդակ

1. Մարզպետարանը՝

1) Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարությանը տրամադրում է տեղեկատվություն մարզի սոցիալ-տնտեսական վիճակի, այդ թվում՝ վարակիչ հիվանդությունների իրավիճակի, դրանց առաջացման և տարածման պատճառների և պայմանների, կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացի մասին:

2) Մշակում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը կարող է ներառել նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի միջոցառումներ:

3) Քննարկում է վարակիչ հիվանդություններին առնչվող քաղաքացիների նամակները (դիմումները և բողոքները):

4) Մշակում է մարզպետի կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա ծրագիրը, որը կարող է ներառել նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացին առնչվող հարցեր:

5) Աջակցում է պետական կառավարման մարմիններին վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացում:

6) Կառավարում է իր ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները:

7) Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է հիգիենիկ և հակահամաճարակային մարմինների սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը:

8) Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով գնահատում է մարզի բնակիչների առողջության ցուցանիշները, այդ թվում նաև՝ վարակիչ հիվանդությունների հիվանդացությունը և մահացությունը, և առաջարկություններ է ներկայացնում լիազոր մարմնին:

9) Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է պետական առողջապահական միջոցառումների իրականացմանը:

10) Մարզի տարածքում ապահովում է համաճարակների կամ դրանց վտանգի դեպքում հատուկ ռեժիմի պահանջների կատարումը:

11) Աջակցում է բնակչության սանիտարահիգիենիկ կրթությանը, առողջ ապրելակերպի քարոզչությանը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային մարմինները՝

1) Շահագրգիռ կառույցների հետ համագործակցելով ազմակերպում են վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով կանխարգելիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ, մասնակցում է դրանց իրականացմանը,

2) Մարզպետարաններին տրամադրում են տեղեկատվություն վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակի և առաջարկություններ՝

կանխարգելիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների անհրաժեշտության վերաբերյալ:

3) Իրականացնում են հսկողություն շահագրգիռ մարմինների տարածքային կառույցների կողմից վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի՝ իրենց իրավասության սահմաններում իրականացվող միջոցառումների իրականացման նկատմամբ:

4) Իրականացում են պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողություն:

5) Կազմակերպում և իրականացնում են հիգիենիկ փորձաքննության և լաբորատոր հետազոտություններ կատարելու նպատակով՝ օդի, ջրի, հողի, պարենահումքի ու սննդամթերքի և այլ արտադրանքի, առարկաների ու նյութերի նմուշառում:

6) Կազմակերպում և մասնակցում են վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով բժշկական ու հիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի ձևավորմանն ուղղված քարոզչության իրականացմանը, բնակչության առանձին խմբերի հիգիենիկ ուսուցմանը:

7) Հայաստանի Հանրապետության տարածքում սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով իրավասու մարմիններին ներկայացնում է առաջարկություններ կամ պահանջ վարակիչ հիվանդությունների առաջացման ու տարածման կանխարգելման և դրանց դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման և իրականացման ուղղությամբ:

8) Բնակչության առողջության պահպանման ու սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով ընդունում է որոշումներ:

III. Տեղական (համայնքային) մակարդակ

1. Համայնքապետարանը՝

1) Մարզպետին տրամադրում է տեղեկատվություն համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի, այդ թվում՝ վարակիչ հիվանդությունների իրավիճակի, դրանց առաջացման և տարածման պատճառների և պայմանների, կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին:

- 2) Մշակում է համայնքի զարգացման ծրագիր, որոնք կարող են ներառել նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը և դրանց դեմ պայքարին վերաբերող հարցեր:
- 3) Քննարկում է վարակիչ հիվանդություններին առնչվող քաղաքացիների նամակները (դիմումները և բողոքները):
- 4) Ներկայացնում է առաջարկ մարզպետի կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա ծրագրերում չներառված միջոցառումների վերաբերյալ, որոնք կարող են ներառել նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի հարցեր:
- 5) Աջակցում է պետական կառավարման մարմինների տարածքային կառույցներին վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացում:
- 6) Կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության առողջապահական կազմակերպությունների գործունեությունը:
- 7) Աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը, կազմակերպում է աղբահանությունը, քաղաքային նշանակության փողոցների, հրապարակների, այգիների և ընդհանուր օգտագործման այլ հասարակական վայրերի մաքրումը, բարեկարգումը և կանաչապատումը:
- 8) Աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը:
- 9) Կազմակերպում է համայնքի սեփականություն համարվող ջրմուղի, կոյուղու շահագործումը:
- 10) Իրականացնում է պետական ծրագրերով նախատեսված՝ համայնքի տարածքում կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների վերացման և անասնաբուժության բնագավառում այլ աշխատանքները:
- 11) Իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից,
- 12) Իրականացնում է շրջակա միջավայրի պահպանության համայնքային ծրագրեր:
- 13) Լիազոր մարմնի հետ համաձայնեցնելով՝ իրականացնում է համայնքային առողջապահական ծրագրեր,

14) Աջակցում է բնակչության սանիտարահիգիենիկ կրթությանը, առողջ ապրելակերպի քարոզչությանը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության մարզային կենտրոնների տարածքային ներկայացուցիչություններ՝ իրականացնում են մարզային մակարդակի համար նախատեսված գործառույթները:

IV. Բոլոր մակարդակներ

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ (առողջության առաջնային պահպանման կազմակերպություններ՝ գյուղական բժշկական ամբուլատորիաներ, բուժական կաբուլատական կետեր և պոլիկլինիկաներ, ինչպես նաև՝ հիվանդանոցներ)՝

1) Իրականացնում են վարակիչ հիվանդությունների դեպքերի հայտնաբերում, հաշվառում, բուժում, սահմանված կարգով հաղորդում, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային մարմինների հրահանգով կանխարգելիչ միջոցառումների իրականացում:

2) Մասնակցում են բնակչության իրազեկման, բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության գործընթացին: